ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

16.07.2025-18.12.2025 թթ ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայության ղեկավարի՝ 2025թ մարտի 14-ի Հ/006-25 հանձնարարագրի հիման վրա «Հայաստանի տարածքային զարգացման» հիմնադրամում իրականացվող ուսումնասիրության շրջանակներում մասնակցել եմ դպրոցներում իրականացվող չափագրման աշխատանքներին և արդյունքները ներկայացրել եմ ուսումնասիրող խմբի ղեկավարին: Ուսումնասիրության շրջանակներում այցելություններ եմ կատարել՝ ք.Երևան Ջ.Աբրահամյանի անվան թիվ 111, Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Պտղունք գյուղի Տիգրան Մեծի անվան միջնակարգ,Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի թիվ 2 հիմնական և Արարատի մարզի Վեդի համայնքի Փոքր Վեդի բնակավայրի Մ.Հավիաննիսյանի անվան միջնակարգ դպրոցներ:

Միաժամանակ՝ իրականացրել եմ «Բարձր որակավորում ունեցող մասնագետների պետական աջակցություն» միջոցառման շրջանակներում պետական բյուջեից հատկացված միջոցների արդյունավետության գնահատման վերաբերյալ մշտադիտարկում, որի շրջանակներում ամփոփվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից ստացված տեղեկատվությունը: Այժմ կազմվում է տեղեկանքի նախագիծը,որը կներկայացվի սահմանված կարգով և ժամկետներում:

Նշված ժամանակահատվածում կատարել եմ նաև տնտեսական ոլորտի վերահսկողության վարչության պետի ընթացիկ հանձնարարականները և մասնակցել եմ վարչությանը առնչվող այլ աշխատանքներին:

Տնտեսական ոլորտի վերահսկողության
վարչության փորձագետ Վարդգես Գասպարյան

18.12.2025 թ.